ջոցի առաջնորդէր Երուսաղէմացւոց Արհինիոս և ըստ այլոց Հերակլիոս կամ Կիւրղոս անուն ոմն. սակայն հաւատացեալքն առաջնորդեալք 'ի քաջ հովուէն իւրեանց ոչ հանդարտէին այնպիսի չարաբարոյ աւազակաց, մինչեւ 'ի դէպ իսկ է կարծել թէ հուսկ յետոյ Ակակիոս 'ի խնդրոյ ժողովրդեանն կացուցեալ իցէ առաջնորդ այնր աթոռոյ զծերունին Յուդա, որ հաւատաց 'ի ժամանակս Գիւտի Խաչին առ Հեղինեաւ եւ կոչի միւս Կիւրեղ իբրեւ եպիսկոպոս Երուսաղէմի, որ և յետ սակաւուց նահատակեցաւ հանդերձ մարբն 'ի Յուլիանոսէ, որպէս տեսցի զկնի։

Իսկ Կոստանդիոս ապրեալ 'ի պատերազմէն Շապհոյ Պարսից արքային, յանկարծ դարձաւ յետս և հասեալ 'ի Տարսոն Կիլիկեցւոց առ ոտամբ Տաւրոսի մեռաւ անդ 'ի տէնդէ 'ի 45 ամաց հասակի և 'ի 25 ամի կայսերութեան (3 Նոյեմ. 361), եւ մարմին նորա տարեալ 'ի Կոստանդինուպոլիս արկաւ 'ի չիրիմն կայսերական առ մարմնոյն Կոստանդիանու յեկեղեցի Առաքելոց։

Եւ յետ նորա ա՛ռ միահեծան զտէրութիւնն Յուլիանոս ուրացող 'ի 29 ամաց հասակի։ Անդէն 'ի սկզբան 361 ամին հրովարտակաւ յայտ արար զօրացն թէ՝ ազատանեալ է յօգնականութիւն դիցն անմահից. պատուականագոյն համարէր լինել մեծ քրմապետ հին կրօնից քան Օգոստոս. և 'ի հրովարտակս իսկ հրամայէր կոչել զԲրիստոնեայս անաստուած Գալիլեացիս, 'ի գլխաւոր դրօշուէ զօրուն հանզգիր անուանն Բրիստոսի, զոր Կոստանդիանոս եդեալ էր. իսկ զայլսն 'ի դօրոշուց զարդարէր դից և իւր պատկերօք։ Զաւերեալ մեհեանս ետ կանգնել մեծաշուք ծախիւք Բրիստոնէից։ Զամենայն առաւելութիւնս եկեղեցականաց, զոր Կոստանդիանոսի շնորհեալ էր, ա՛ռ յետս։ Յամենայն պաշտամանց տէրութեանն 'ի բաց հան զԲրիստոնեայսն. առ 'ի ծաղր առնել զհաւատս Բրիստոնէից, ինքնին գրեաց գիրս հակառակ Աւետարանին։ Ժողովէր երբեմն եպիսկոպոսունս յայլ և այլ կարծեաց հանդերձ ժողովրդականօք յիւրում պալատան՝ զի վիճեսցին, և 'ի սաստկանալ զժութեանն՝ առաւել բորբոքէր զհակառակութիւնս նոցա. դմին իրի տայր ազատութիւն դառնալոյ և եպիսկոպոսացն աքսորելոյ 'ի Կոստանդեայ (362)։ Եւ այնպէս